



## ԻՍԱՀԱԿ ՆՅՈՒՏՈՆ

Դժվար է նշել մեկին, որն այնքան մեծ ներդրում ունենա ֆիզիկայի զարգացման գործում, որքան Նյուտոնը: Անգլիացի այդ գիտնականը իրավամբ համարվում է դասական մեխանիկայի հիմնադիրը, և այդ պատճառով է, որ ներկայումս դասական մեխանիկան հաճախ անվանում են նաև նյուտոնյան մեխանիկա:

«Բնափիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները» աշխատությունում նա տվել է մատերիայի, շարժման քանակի և ուժերի սահմանումները, ձևակերպել մեխանիկայի հիմքում ընկած երեք օրենքները, որոնք ներկայումս կոչվում են նրա անունով, արտածել է իմպուլսի պահպանման օրենքը, ստացել է մածուցիկ հեղուկի դիմադրության ուժի բանաձևը, հայտնագործել է տիեզերական ձգողության օրենքը, մշակել է երկնային մարմինների շարժման օրինաչափությունները, բացատրել Համաշխարհային օվկիանոսի տեղատվությունների և մակընթացությունների առաջացումը: